

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմայն Խմբագրատան մէջ:

(Պատրաստող քաղցր զինում են ուղղակի
Тифлис. Редакция „Мунис“

ՄԱՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Մացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Չը շտապեց ուրախանալ:—Նէրքին տեսնու-
թիւն: Նամակ երևանից: Նամակ Ղազարից:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսնութիւն:
Ֆրանսիա: «Մասիս» թղթակցութիւնը: Կաթօլիկ
հայերի քաջագործութիւնը: Սըր Ուիլիամ Զարբորթի
բանախօսութիւնը: Նամակ Թիֆլիսից: Նամակ
Թիֆլիսից: Արտաքին լուրեր:—Սառն լու-
րեր:—Հայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

20 ԾՏԱՊԵՆԲ ՈՒՐԱՄԱՆԱԼ

«Միջազգային ընկերութեան»
միջոցով վերջին օրերս մեզ հա-
ղորդված հեռագիրները տեղեկաց-
նում են մեզ որ Մեզիան սկսել
է այժմ պաշտպան հանդիսանալ
Փոքր-Մսիայի մէջ մոնղոլիկ վե-
րանորդութիւնների: Մեզիան այն
աստիճան սրտին է առել Փոքր-
Մսիայի բրիտանաց ազգաբնա-
կութեան ճնշված դրութիւնը, որ
Թիֆլիսից պահանջելով իր ա-
սիական նահանգներում ընթերց-
ների իրադրոճելը, սպառնում է
Սուլթանին, որ գահընկէց կանի
նրան, նրա տեղը նրա եղբոր Բա-
շի-էֆենդիին նստացնելով գահի
վրա, եթէ Թիֆլիսյան յապաղի
իրագործել ընթերցները Փոքր-Մ-
սիայում: Մեզիան իր վերջնագրի
(ուլտիմատումի) մէջ, որ ուղար-
կել է Թիֆլիսից, ասում է, որ
այլ ևս չէ կարող համբերել Փոքր-
Մսիայի բրիտանացների ճնշված
դրութիւնը:

Պատասխանելով Մեզիայի պա-
հանջին, Թիֆլիսաց նոր միւնիստրու-
թիւնը Մահմուդ-փաշայի բերա-
նով յայտնել է որ Թիֆլիսյան ան-
պատճառ պէտք է մոնղոլ վերա-
նորդութիւնները Փոքր-Մսիա-
յում և ոչ թէ վայրկեան կեր-
պով այլ անկեղծաբար, ճշմար-
տութեամբ և իրանց ամբողջ կա-
տարելութեամբ:

Մեզիայի կողմից արած այդ
քայլը անկասկած ցոյց է տալիս
որքան ոյժ ունի այժմ Մեզիան
ոչ թէ միայն Միջին-Մսիայի
մահմետական երկիրներում և
Հնդկաստանում, բայց և Թիֆլի-
սիայում: Կարծես ամբողջ մահմե-
տական աշխարհի երկիրները այժմ
Մեծ-Բրիտանիայի աւատական
երկիրներ են դարձել: Մեզիան նա-
յում է այժմ Թիֆլիսի վրա ոչ
թէ որպէս իր անկախութիւնը ունե-

ցող պետութեան վրա, այլ որպէս
Մեզիայի մի նահանգի վրա, որի
նահանգապետին Լոնդոնի կաբի-
նետը կարող է կամաւոր կերպով
փոխել, երբ այդ նահանգապետը
անհնազանդ է լինում կենտրոնա-
կան կառավարութեանը:

Բայց ուրիշ կողմից Մեզիան
այդքան յանդուգն է դարձել մա-
նաւանդ այն րօպէից, երբ Մատ-
րօ-Ունգարիայի և Վերմանիայի
մէջ դաշնագրութիւն է կապվել:
Սալիսբուրիի նոր ասած ճառը
Մանչեստերի մէջ սաստիկ ու-
րախութիւն է յայտնում որ եւ-
րօպական երկու պետութիւնների
մէջ կապված դաշնագրութեան
պատճառով Ռուսաստանը առան-
ճացած կը լինի և հեռացրած
կը լինի թէ Բալկանեան թերա-
կղզու և թէ առհասարակ արե-
ւելեան գործերի մէջ միջամտելուց:
Մեզիան նոր ոյժ է ստացել և
աւելի ազատ շունչ է բաշել այն
րօպէից, երբ համոզվել է թէ
գերմանական-աւստրիական դաշ-
նագրութեան շնորհով սլաւօնա-
կան ազգերը այլ ևս անմիջական
պաշտպան չեն ունենայ Ռուսաս-
տանի մէջ և գուցէ կը ճնշվեն
գերմանական-ունգարական ցեղերի
ներդրութեան տակ: Մեզիան
գգում է թէ իր ձեռքերի վրա
եղած կապանքները բացվել են այն
րօպէից, երբ Մատրիան պահա-
պան է կանգնել Բաթֆորի մօտ...

Բայց այժմ ներկայանում է
մեզ և մի ուրիշ խնդիր արդեօք
Փոքր-Մսիայի վերաբերութեամբ
Մեզիայի ցանկութիւնները ան-
կեղծ են... Չենք կարծում...

Ինչի մինչև այժմ Մեզիան
չէր պաշտպանում Փոքր-Մսիայի
բրիտանացներին, ինչի լուռ էր
կենում մինչև որ հայերին հարս-
տահարում էին թէ Թիֆլիսը և
թէ քիւրդերը: Ինչի մէջն է գաղտ-
նիքը որ նոյն Մեզիան նոր է յի-
շել խեղճ բրիտանացներին և
այժմ միայն սկսել է սրտին առնել
ողորմելիների դրութիւնը...

Գաղտնիքը նրա մէջն է, որ
մինչև այժմ Թիֆլիսի միւնիս-
տրութիւնը անգլիամոլ էր, բայց
հէնց որ անգլիամոլ խէյրէզին-
փաշայի միւնիստրութիւնը ընկա-
ւ նրա տեղը բռնեց Ռուսաստա-

նին համակողջ նոր Թիֆլիսաց մի-
նիստրութիւնը, Մեզիան յանկարծ
յիշեց Փոքր-Մսիայի բրիտանաց-
ների անտանելի դրութիւնը և
սկսեց նրանց մասին հոգալ: Այդ
միտքը հաստատում է նոյն իսկ
Լոնդոնի անգլիական մամուլը:
«Daily News» լրագիրը կարծում
է որ Մեզիայի համարձակ վար-
մունքը բացատրվում է նրանով
որ Թիֆլիսաց միւնիստրութիւնը
փոխվել է: Հեռագիրը հաղոր-
դում է որ Մեզիան պահանջում է
Սուլթանից որ կրկին նշանակվի
խէյրէզինի միւնիստրութիւնը:

Ով է մեզ երաշխաւոր, թէ
հէնց որ կրկին կը նշանակվի
Թիֆլիսից միւնիստրութիւնը, Մեզիան
կրկին չի մոռանայ Փոքր-Մսիայի բրիտա-
նացների անտանելի վիճակը և
կրկին, ինչպէս և արել է մինչև
այժմ սառնասրտութեամբ չի նա-
յի ինչպէս Հայաստանի բրիտա-
նեան ճնշվում և կորչում է մահ-
մետական բարբարոսութեան ան-
գութ հարուածների տակ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

13 հոկտեմբերի

«Մշակ» № 172 ձեռքից ձեռք է անցնում: Ա-
ռաջնորդող յօդուածը և Հայկակի նամակը մի
անտվոր ազանութեամբ կարդացվում են: Անգ-
լիայի քաղաքականութիւնը փոխվել է, Հայաստա-
նին ինքնավարութիւն տալու հարցի վրա նա
յում է մի փոքր նշաւ աչքով: Ինչ գեղեցիկ խօսքեր,
ինչ ազնիւ խօսքեր, հայի սիրտը կարծես թէ առած
թռչում է, երբ լսում է մի բարի համբաւ Հայաս-
տանի համար:

Խրիմեան Հայաստան գնաց, այդ մարդը կարծես
իր վրա յառած ունի բոլոր հայերի հայացքը:
Տեսնե՛ք կաշոյով նրան մի օր կենդանութիւն և
լոյս տալ ազգութեան մարած լապտերին:
Երբ նամակները բերեց «Մշակ» յիշեալ հա-
մարը, եւ այդ օրը մի գեղեցիկ խնջոյքի մէջ էի
գտնվում, մի հրաշալի պարտիզան բնութեան գոր-
գի վրա նստած: Այդ օրը շնորհիւ կոնծաբանու-
թեան ամենքս էլ ազգասէր էինք դարձել: Բա-
ժակներ էինք դարդակել որպէս «Արարատեան»
նոյնպէս և այլ ընկերութեանց անունով, զանա-
աւորական չէինք առել Թիֆլիսի «Մշակ» և «Մե-
ղու» Հայաստանին խմբագիրներին:

Ինչ գեղեցիկ համար է այսօրվայ «Մշակը»
բացականչեցի եւ: «Մե» քայլ դէպի առաջ՝ առաջ-
նորդող յօդուածը և Հայկակի նամակը սկսեցի
կարդալ բարձր ձայնով: Երբ վերջացրի ըմբերա-
նութիւնը, հայրենասիրութեան կրակը աւելի բոր-
բոքվեց մեր կառավարչի մէջ, վերկացաւ տեղից
մի բաժակ ձեռքում և առաջարկեց հետեւել տօս-
տը: «Պարտնայք, մենք շատ կենացներ խմեցինք,

այժմ դէպքը առիթ է տալիս մի բաժակ ևս դար-
դակել: Խմե՛ք խրիմեան հայրիկի, Ներսէս պատ-
րիարքի, Հայկակի և նոյնպէս Վ. Պօլսի հայ հա-
մալների կենացը:» Կեցցէ՛նք խաղաղակը զուարթ
օղը լինողներից, մի վայրկենի մէջ ամենքս մի մի
բաժակ ձեռքերնիս պարսպաւ ունեցինք: մի քանի
տաք խօսքեր ասելով, քամեցինք մեր ձեռքի բա-
ժակները մինչև յատակը և այնուհետեւ մենք կար-
ծես օգեղէն նոյնքների վրա նստած Հայաստան
էինք թռչում:

Թողնե՛ք մեր խնջոյքը իր հրապարակ և գեղե-
ցիկ առարկաների հետ և դցե՛ք մի հայեացք օրա-
է կան հարցերի վրա:

Ահա մի քանի անգամ է որ կայանում են քա-
ղաքային Գումայի նիստերը, առ այժմ մի նշանա-
ւոր և աչքի ընկնող հարց չէ լուծվել: այսօր երե-
կոյան Գումայն պէտք է լուծէր Արիսայաթ ա-
ռուի հարցը: Շատ լաւ կը լինէր, որ այդ հարցը
օր առաջ լուծուէն ստանար և այդ առումը բաց-
վելը կարող էր մի նշանաւոր քայլ համարվել քա-
ղաքային վարչութեան կողմից: Պէտք է ասել որ
մեզանում հասարակական գործերի վրա մարդիկ
նայում են անձնական կէտից, ընդհանուրի շահը
սեփականին զոհելով: Եթէ հարց է բարձրանում
Արիսայաթ առուի մասին, այն մարդիկ որոնք
ընկնում են քաղաքի մի օրիշ մասում, ջրի ամենա-
առատ տեղերում, նոյա ապարդիւն են համարում
ջրից զուրկ քաղաքամասնում առուի համար փող
ծախել: դա աւելորդ է, ասում են նրանք, քա-
ղաքը փող չունի և այն: Մի այլ օրինակ: մի քա-
նի ամիս է հարց է ծագել տեղիս գուբերնատորի
տան դիմաց գտնվող պարապ գետինը ծախել, այդ-
տեղ մի մեծ շէնք կառուցանել որպէս Թամա-
շիվի քարվանդարան Թիֆլիսում: Այն մարդիկ
որոնք տուն և կրպակ ունեն, հաւաստի դիտեն որ
դորանով դղալը կիջին իրանց կալուածների վարձի
գինը, ուստի ամեն կերպ աշխատում են արգելք
լինել այդ հրապարակի ծախելուն: Իսկ կրպակ
չունեցողները հակառակն են այնատու:

Թեմական տեսուչները այստեղ են. նոքա վե-
րադարձան Ազգ. խմբից: Նայելով պ. Պոչմանցի
պատմելուն, այնտեղ բաւական կարգի են դրված
գործերը: Գարձեալ կրկնում ենք՝ մեզանում Թե-
մական տեսուչ անունը լոկ երևակայական տիտղոս
է, իրականապէս ոչինչ չը կայ: Ինչ թեմական տե-
սուչ, երբ նա ոչ մի դպրոցի մէջ իրաւունք չունի
ազատ մուտք գործել: Լսում ենք որ այդպիսի մի
կողմնակի հրահանդ են ստացել թեմական տե-
սուչները վաղարշապատից: Վերջապէս ժամանակ
է մի մեծ ուսուցչական ժողով կազմել, հրաւիրել
ամեն տեղից բոլոր յայտնի հայ ուսուցիչներին,
որոնք միանան ձեռքերն ուսուցչաց հետ, մտածեն,
խելք խելքի տան և մի կանոնադր յօդունեն մեր
դպրոցների համար:

Այս օրերումս անցան մեր քաղաքից մի խումբ
մուրացիկներ (կարմիր): Գրանք դուրս են եկել
Ստաւրապօլի նահանգից և դիմում են Ղարսի
չրջակայքը: Արդեօք աւելի լաւ չէր լինի եթէ
հայերը, այդ աշխատասէր ժողովուրդը բնակվէին
Ղարսի արդաւանդ հողերի վրա, քան թէ այդ կեղ-
տոտ արարածները, որոնք իրանց օրական ապ-
րուստը հայթայթում են սրանից նրանից մուրալով:
Այս քանի մի օր է, որ Երևանում է գտնվում
ուստական հիւպատոս պ. Կամարականը:

Ա. Երև.

ՆԱՄԱԿ ՂԱԶԱՌԻՑ

22 հոկտեմբերի

Ինչպէս ամենայն տեղ, այնպէս և Ղազարի
նահանգում ժողովուրդի բաղանջաւոր պատճառաւ
վարեհանգերը սակաւութիւն են անում: Այդ
տեղի հողն ընդհանրապէս երկու մաս կարելի է
բաժանել, թէ դրութեան և թէ պողպատութեան
կողմից, դաշտային և լեռնադաշտայն պղծաբեր մաս
որ պատկանում է Թուրք պաշարակութեանը:

քական ծանր խնդրով զբաղած լինելուն, ժամանակ չունի այս գաւառներն ու Քոմի-սէրները խորհելու:

ԿԱՌՈՒԽ ԼԱՅՆՈՒՄ ԲԱՅԱՆՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կիրակի գիշեր Հակահատուկ կաթողիկոսական ազգային Բերա Սաղաթ-Աղաճը փողոցը գտնված Մխիթարեանց վարժարանը բռնու-թեամբ գրաւելու փորձ փորձեցին, բայց չը յաջողեցան:

Ահաւորիկ պատմութիւնը: Մանուէլ վարդապետ Քաջունի, Մխիթա-րեան—Հատուկեան, որ Քաղկեդոնեան վար-ժարանի մեծաւորութիւնն ստանձնած էր նոյն վարժարանին տեսուչ է. Վարդան Շիշմանեան վարդապետին Հետ գաղնազի մը ստորագրի-լով կիրակի առաւօտուն մասնաւոր նամակնե-րով կը ծանուցանէ յիշեալ Հ. Վարդան և Հ. Յակոբ Արճեան վարդապետներուն, որ եթէ Հատուկեան կուտայութեան չը յարին, այսու-Հետեւ վարժարան չը պիտի ընդունուին: Ա-սոր փրա յիշեալ երկու վարդապետը խորհրդով և առաջնորդութեամբ Էնթիքէնեան Հ. Գրի-գոր վարդապետին, նոյն գիշերը կորոշին Սա-ղաթ-Աղաճի փողոցը գտնուած Մխիթարեան վարժարանը գրաւել:

Ըստ այս որոշման՝ Հակահատուկներէն 30—40 հոգի հաւաքուելով և Ալեանազեան Հ. Նիշեալ վարդապետին գիշերանց վարժարանին դռնէն ներս մտնելի առիթ առնելով, անոր և-տէքն ներս կը մտնեն, և մէջը գտնուած դռնապաններն ալ դուռ հանելով վարժարա-նին ահա կը լինին: Սակայն Դայեթեան Հ. Սամուէլ վարդապետ ուրիշ քանի մը Հատու-կեան ընկերներով կը հասնի, և ոստիկանու-թեան լուր կը զրկուի: Իսկոյն ոստիկանու-թեան նախարարն անձամբ կը հասնի, և ներսը գտնուողները դուռն ելնելու կը պար-տաւորէ խոտանալով յաջորդ օրը խնդիրը քննել, և վարժարանին դռան պահպանու-թիւնն իւր պաշտօնէից կը յանձնէ:

Նրկուշարթի օրն երկու կողմէ անձինք ոստիկանութեան նախարարին ներկայա-ցան. նա ալ որոշեց որ Հ. Վարդան և Հ. Յակոբ վարդապետք Քաղկեդոնեան վարժա-րանը փրադառնան, և Բերայի վարժարանն ալ Հատուկեան Մխիթարեանց ձեռքը մնայ, որովհետեւ տէրութիւն որոշած է ամեն բան իր գտնուած վիճակին մէջ պահել:

Հ. Վարդան և Հ. Յակոբ նոյն օրն ոստիկա-նութեան նախարարին ընկերակցութեամբ Քաղկեդոնեան վարժարանը գնացին և իրենց սենեակները նստան: Հ. Մանուէլ Գրի. Հա-տուկեան նախարարն անմիջ չը կախեց: Գործերն այս վիճակին մէջ են այժմ, և չը գիտնեմք թէ տակաւին ինչ պիտի լինի: Այս անգամ կռիւն ոչ միայն Հատուկեան և Հակահատուկեանի, այլ նաև Մխիթարեան մէջ է, որք նոյնպէս Հատուկեանի և Հակա-հատուկեանի բաժանուած են:

(Մասի 10 հոկտ.)

ԱՐԵՎԻԿԱՆ ԶԱՐԳՈՐԹԻ

ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ

Մեր երկրւան թերթին մէջ, Անդղղի և րեսփոխանաց Ժողովը ազատական նշանաւոր անդամ Սըր. Ուիլիսըմ Հարթթըրթի վերջերս գու-մարեալ Միթիլի մը մէջ ըրած բանախօսու-թեանը նկատմամբ համառօտ գաղափար մը տուինք: Սըր. Հարթթըրթ մասնաւորապէս Ան-գլո-Քուրթ պայմանագրութեան և Փոքր-Ասիոյ բարենորոգմանց վրա խօսած լինելով իւր բա-նախօսութեան այս մասն ամբողջապէս կը թարգմանեմք:

Նախարարութիւնը Պուլտարիոյ մասին կը-

րած պարտութիւնը դարձնելու համար Ան-գլո-Քուրթ պայմանագրութիւնը շինեց և Կիւ-րոսն ստացաւ: Սա գրիթէ ձանձրացայ հարց-նելով թէ ինչ եղաւ Կիւրոս: Իսկ այժմ ամեն ոք գիտէ: Կիւրոս Անդղղիական տէրութեան գէշ կատակն և մէկ իրական բե-ռն եղաւ: Ամեն մարդ կը խնդայ Կիւրոսի վրա: Բայց այժմ այդ կղզւոյն համար դրամ տալու ալ կը պարտաւորինք: Անցեալ տարի լորտ Պիթոնաթիւտ ապահովուց մեղ թէ Կի-ւրոս իւր քաղաքային ծախքերն հայթայթե-լու կարող պիտի լինի: Բայց խորհրդարանին այս տարւան նիստերուն մէջ 25000 ոսկի քաղաքային ծախք բուհարկեցինք ուսհահորդ գորաց խմբի մը համար, և երբ հարցուցինք թէ ինչ պիտի ընեն, նախարարութիւնը պա-տասխանեց թէ Կիւրոսի մէջ դանձ փոխադ-րող կարաւանաց պիտի ուղեկցին: Գանձ, ի՞նչպիսի դանձ է այդ: Ի՞մ տեղեկութեանցս նայելով, Կիւրոսի մէջ հետը դօրք զրկելը դանձ չը պիտի լինի, և եթէ դանձ մը կայ, այն ալ մեր քուէարկած 25000 ոսկին է:

Ճնշուելով որ ուղիղ գործ մ'էր Կիւրոսն ստանալ, ո՞վ կրնայ պաշտպանել այդ կղզին Անդղղի ձեռք անցնելուն պայմաններն, որք Կիւրոսի երմտական և քաղաքական վարչու-թիւնը գրիթէ անհար կրնան: Անդղղի եր-կիրներուն ուրիշ որ կողմը տեսնուած է որ երկրին բնակիչներէ հաւաքուած արոց երկու երրորդն օտար կառավարութեան մը միջնորդի, որ այդ տուրքը տուող բնակաց որ և է ծա-ռայութիւն չը մատուցանէր: Ահա մեր կա-ռավարութեան անկարող լինելուն մէկ ուրիշ ապացոյցն ալ:

Քիչ Կիւրոս ինքնին միջադէպ մ'էր միայն Անգլո-Քուրթական մեծ պայմանագրին մէջ: Այդ պայմանագրութիւնն ալ առանձին մեծ գործ մ'էր և կուգամ ձեզ յիշեցնել թէ այդ արտաքոյ կարգի պայմանագրութեամբ Անգ-ղիական կառավարութիւնն ի՞նչ ընել խոս-տացած էր Անդղղի Ժողովուրդեան: Մեր մի և նոյն ժամանակ Փոքր-Ասիոյ պաշտպաններն ու վերանորոգիչները պիտի լինէինք: Չափա-զանցութիւն ըսած չը թուելու համար՝ նոյն իսկ նախարարութեան մէկ անդամին խօսքերը պիտի յիշեմ: Լորտ Սանտըն նախարարութեան անդամ լինելէ ետեւ ըրած առաջին բանախօ-սութեանը մէջ Անգլո-Քուրթ պայմանագրին հանդամները նկարագրած էր սրտաշարժ պեր-ձախօսութեամբ մը, որ անձնական յիշատակ-ներով և քաղաքական մարդաբանութեամբ լի էր: Վերջին քան և հինգ տարիներուն մէջ

դարնան ժամանակ քանիցս Սուրիոյ ծաղկա-ւէտ դաշտերուն մէջ թափառեցայ և Տիգրիսի և Նիփոսի եզերաց վրա շրջապայեցայ, այն ագնիւ գետերուն, որք այնքան արժանի են իրենց նախնի համբաւոյն: Հայաստանի լեռանց մէջ ալ թափառեցայ, և ամեն կողմանէ մի և նոյն աղաղակ կը հասնէր ինձ թէ Ս'ր Ե պիտի գան Անգլիացիք: Այդ գործը կատարեցաւ այժմ և վերջապէս Անդղղի այդ Ժողովուրդին օգնութեան կը հասնի: Այո, մեք այդ Ժողովուրդեան քով կերթամք՝ մեր Հեա տանելով երկաթուղիներ, երկրագործական շո-ղեշարժ մեքենաներ և վաճառականութեան այլ և այլ բարիքներ: Այս փառաւոր ձեռ-նարկէն ետ չը քաշուիմք: Այս ագնիւ գործին ձեռք դարնելու համար գտնուորիմք, Աստու-ծոյ փառք տամք և սիրտ առնուիմք:

Քնչապէս կը տեսնէք, լորտ Սանտըն այս խօսքերը գեղեցիկ և մինչև իսկ փեմ էին: Բայց ի՞նչ եղաւ վախճանը: Փոքր Ասիոյ արդի վիճակին վրա նոյն իսկ Քիւրթի երկրւան յո-գուածը կարգացե՞ք (գոր մեք ալ Մասիսի և րեկուան և առջի աւուր թիւերուն մէջ հը-րատարակեցինք) և կարծեմ համաժող պիտի լինիք ինձ երբ ըսեմ թէ Սուրիոյ ծաղկաւէտ դաշտերուն մէջ բնակող և Տիգրիսի և Նիփո-սոյ ափունքն և Հայաստանի լեռները զեզե-րող դժբաղդ Ժողովուրդը Պու. Պիթըրթի տա-րաբար կ'ընջ վիճակն ունին, որ կ'աղաղակէր:

«Քիւր Աննա, քոյր Աննա», կը տեսնէք արեւօք, մարդ կուգայ» Կը ցաւիմ ըսել թէ լորտ Սան-տըն և իր ընկերներն երող միւս նախարարք բոլորովն ետ կեցան այդ փառաւոր ձեռնար-կէն: Անոնք երբէք իրենց ձեռքը չը գտնու-րեցին» և գործի չը սկսան: Կրնան Վաստուծոյ զոհութիւն տուած» լինիլ, բայց սիրտ «առ-նելով» գործ չը տեսան. և երկրագործական շոգեշարժ մեքենայներ, երկաթուղիներ և վաճառականութեան ամեն բարիքներն այժմ Հայաստան լեռներէն այնչափ հեռի են, որ չափ հեռի էին Անգլո-Քուրթ պայմանագրին կնքուելէն առաջ:

(Մասի 4 հոկտ.)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Տրապիզոն, 19 հոկտ.

Իրիմեան հայրիկին դէպի Հայաստան երթալը կը հաստատեն հոս: Կրնան նաև որ իրեն հետ ձա-նապարհորդակցի են երկու հարկերէն աւելի լաւ զնաւորված Կ. Պօլսի հայ համալսերն:

Այս օրերս հոս ծանօթացայ մի պարսկին հետ, որ քաջ տեղեակ է Հնդկաստանի ազգային գործե-րուն: Նա ինձի պատմած է քանի մը զաղտնիքներ Գրիգորիս սրբազանի Հնդկաստանին մէջ գործու-նելութեան մասին: Կրնէ թէ Վեհափառը կանչած է Գրիգորիս սրբազանն հեռագրով մը, որպէս զի զայ, ներկայանայ Ս. Էջմիածին, բայց Գրիգորիսը իրեն չը լսելու կը գնէ: Նա հոն է, Հեթումանի օգնութեամբ զբաղած կտակերի ստակը հաւա-քելու: Կրնան երկուքն ալ կը զբաղվին այժմ ազ-գային քանի մը կտակներ ձեռք բերել: Կրնան թէ Հեթումանը կրցած է ստանալ Կալկաթայի հայոց եկեղեցիէն մինչև 30,000 ռուբլ, կտակներուն վե-րաբերալ դատերը վարելու յոժանդակութիւն և ի վարձատրութիւն, այն պայմանաւ որ կանխապէս ստացած գումարը վերադարձնէ եկեղեցուն: Բայց կաւեցունեն թէ դատերէն մինը արդէն վերջացած է ստակն ընդունած լինելով, սրբազան Գրիգորիս և Հեթումանը 20,000 ռուբլին չափ զրկած են Էջ-միածին, իսկ ինչքան իրենց մօտ պահած են, յա-յտի չէ, միայն ուրիշ կողմէ կը լսվի թէ կը հա-ժարվին Կալկաթայի եկեղեցուն վերադարձնել ի-րենց կանխիկ ստացած 30,000 ռուբլի գումարն:

Հոս բնակվող պ. Արամ Ղուկասեանի շնոր-հիւ Տրապիզոնի մէջ քանի մը առնէն վիճվ պիտի բացվի մի ընթերցարան, ուր պիտի ստացվին ազ-գային ամեն լրագրութիւնը: Այս հիմնարկութիւնը շատ կարեւոր մի հիմնարկութիւն պիտի համարվի մեզի համար, վասն զի արապիկոցի հայք բա-րոյապէս քնած կամ գոնէ թմրած դրութեան մէջ կը գտնվին: Ի՞նչ ազգային կեանքի նշուլ կայ, ոչ ալ առհասարակ մտաւոր կեանքի ու և շարժում կը նշմարվի հոս:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Վան, 16/28 սեպտ.

Գիտե՛ք թէ ինչ անձկանք ուստական հիւպա-տոսի կը սպասէր այստեղ հայ Ժողովուրդ. այնպէս որ երբ եկաւ պ. Կամարական, անմիայն չըրվ և հանդիսով ընդունեց զայն: Ընդհանուր կարծիք էր թէ հարստահարութիւններն պիտի դադրին, բայց տեսէ՛ք թէ քիւրդերը կառավարութեան քա-շաղկաւելով ինչ աստիճան յանդգնութեան հասան իրենց չարքներն տակնընկելու մէջ: Չը բաւականա-լով հայ գիւղեր կողոպտելով, ամեն անգամ լուր կը խրկէին ուստական փոխ-հիւպատոս պ. Կամ-արականի որ պատրաստ գտնուի տեսնել քրդա-կան քաջադործութիւն: Շատ չանցաւ, կատարեցին իրենց սպառնալիք. արժամարհեցին Պալքանները անցնող տէր պետութիւնը և անա սեպտ. 12-ին ժողովեցան դարնել ուստական կողմը որ նամակ-ներ և ծրագիր կը բերէր պ. Կամարականի, կո-ղապեցին Կապի-դէ-օլ ըստած տեղը թէ թրդ-թաքեր ոստիկանը և թէ՛ անոր հետ գտնուող 11 ուղեկիցները: Այս շահատակութիւնը գործող քիւր-դերը թուով 40 էին, որք լաւ հրացաններով զի-նուած էին: Թղթաքերին հարցուցած էին քիւր-դերը թէ «մեք լսած էինք որ կոնստանդնուպէս և մի (ամուսին) ալ ձառնան են, ուր է այժմ, ձեզ հետ չէ, մեք զայն տանելու համար եկած ենք որ ցոյց տանք թէ մինչև Կ. Պօլսը պարսպալը արշաւող ուստներն, զմեզ քիւրդերս չեն կրնար նուաճել»:

Ռուսական փոստը դարնելու չափ յանդգնող քիւրդերէն դիւրին է գիտնալ թէ ինչ ստակի չարքներ առաջ կը դան հայոց վրա: Կրնան թէ կողոպտուած փոստը գտնվի և միւղիլին քով, ուրիմն ակներև է որ այս անօրինակ անցքին դըր-գողը ինքն միւղիլին է եղած: Փոստի կողոպտուե-լուն գոյժը սեպտ. 14-ին հասաւ հոս: Պ. Կամար-ական փոխարեւ իրիստ թագրի մը (քողք) գրել կառավարութեանը, որ անմիջապէս ոստի-կաններ ձամբայ հանեց քիւրդերու ետէն, բայց տակաւին չը բռնուեցան չարագործները: Բոլոր հայերը սաստիկ ցաւ դժայցն պ. Կամարա-կանի փոստի զարնուելուն վրա: Ամեն մարդ մեծ հետաքրքրութեամբ կը սպասէ տեսնել թէ ինչ արդիւնք պիտի ունենայ այս բան, թէ ինչ հա-տուցում պիտի անէ կառավարութիւնը և թէ ինչ միջոց ձեռք պիտի առնու գտնել չարագործ-ները:

Գ. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վանից «Մասիս» լրագրին գրում են հետե-ւեալը սեպտ. 8-ից: Այս շաբթու երեք այցելու-ներ հասան ի Վան, որոց մին է Մանդիկեան պ. Սեդրակ, որ իր գրաւոր աշխատութեամբ ծանօթ է շատերուն, երկրորդը «Արարատեան» անձնուէր ընկերութեան անդամներէն պ. Պետրոս Վախ-րեան, որ վարժապետանոցին և գիւղական դպրո-ցաց այցելութեան եղած է, երրորդն է՝ պ. Նշան Մատաթեան երկրագործ: Թէ պ. Մանդիկեան և թէ այս վերջինը՝ Տիֆլիսէն դրուած են այս կող-մեր մանկավարժական և մի և երկրագործական դպրոց բանալու: Վանեցին մեծ համակրութեամբ ընդունեց այս պարսկներ, գիտնալով թէ երկու-քին ալ կարօտ է և թէ ուսման հետ պէտք է նաև հաց վատկելու և երկիր մշակելու կերպն ուսուցանել այս Ժողովուրդին, որուն մէջ իսպառ աղէտ է, ոչ միայն Վանիցն՝ այլ և ամբողջ Ասիոյ Տաճկաստանի: Այս համակրանաց ինչպէս ձեռնարկե-ցաւ հանգանակութիւն մի բանալ Ժողովուրդին մէջ յանուս այն երկրագործական դպրոցին՝ որ ազգասի-րացնպատուիք Վանայ շրջակայներն յարմարագոյն տեղի մի վրայ պիտի բացուի յիշեալ երկրագործին ձեռքը: Այս ձեռնարկութեան մէջ առաջնորդ և յորդոր հանդիսացան իրենց նապաստիք՝ Պ. Կ. Կամարական փոխ հիւպատոս Ռուսիոյ 100 լիւրա: Նրեմիս սրբազան 20 լիւրա: Աղաթնեան Սկրտիչ Էֆէնտի 30: Արիկ Էֆէնտի նախագահ՝ եղեռնա-գատ առնին 40 լիւրա: Կարապետ Էֆէնտի նա-խագահ՝ առևտրական Ժողովին 20 լիւրա, Գէ-որդ Էֆ. Գալսեան, 30 լիւրա: Սոյն հան-գանակութիւնը պիտի շարունակի մասնաժո-ղովի մի ձեռք. յոյս կայ թէ քիւր օրէն բաւական գումար մի պիտի գոյանայ յիշեալ դպրոցին ի նպատու: Տարակոյս չունինք թէ մեր հեռաքանա-հայրենակիցներ և ազգասէր անձինք պիտի օգնեն այս գործին որ մեծ և նշանաւոր պիտի լինի ոչ միայն Վանեցոյն՝ այլ և Հայաստանի ամեն դա-ւաւորներն համար:

Ընթերցողը յիշում է «Մշակի» № 103 մէջ տըպ-ված նկատողութիւնը, որի մէջ պատմում էինք թէ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չէր կամենում որդեգիր ընդունել Նուբուս կողմերի Նիթ գիւղի երկու ուստիաց լուսաւորչադա-ւան մանուկներին: Այժմ՝ իմացանք որ յիշեալ դպրոցի հոգաբարձութիւնը ընդունեց վեր-ջապէս այդ երկու մանուկներին: Հնորատուում ենք Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը իր արած օգտաւէտ գործի համար: Լուսւ ենք որ և Ս. Էջմիածնի ձեռնարկը այս տարի ընդունեց Նիթ գիւղի երկու ուստիացի մանուկներին:

Խաւաքի—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

